ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

2601, Շիրակի մարզ գ. Ախուրյան , Գյումրիի խճ.42
Հեռ. (374312) 70322, 70885
Էլ. փոստ: Akhuryan_ siti@yahoo.com
Վեբ կայք: www.Akhuryan.am

<< 25>> 06 2013թ. № 177

Ձեր № №

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ .

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2013թվականի հունիսի 17-ին կայացած թիվ 4-րդ նիստի NN - 28, 29-Ն, 30, 31, 32, 33, 34, 35 որոշումները:

Առդիր 10 / տաս/ թերթ:

Հարգանքով

Ա. ԻԳԻԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 5222-13
26 06 13թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 28

17 հունիսի 2013 թվական
գ.Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈԲՈՒՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթով և հաշվի առնելով Նոր Ախուրյանի ազգաբնակչության բողոքը, որ Նոր Ախուրյան երթուղային գծում հայտարարված մրցույթը չկայացած համարելու պատճառով Նոր Ախուրյանում բնակվող ուղևորների փոխադրում չի իրականացվում և այն որ ուղևորների ժամանակավոր փոխադրման համար անհրաժեշտ է փոխադրամիջոցի ձեռք բերում և որպեսզի առաջացած արտակարգ իրավիճակը չշարունակվի, ուստի հիմք ընդունելով համայնքի ազգաբնակչության արդարացի դժգոհությունները , Ախուրյան համայնքի ավագանին

**ո ր ո շ ու մ է՝**

1. Տալ համաձայնություն Ախուրյան համայնքի ղեկավարին Գյումրի - Նոր Ախուրյան – Գյումրի երթուղու սպասարկման համար գնել մարդատար ավտոբուս, առանց գնման այլ ընթացակարգի կիրառմամբ:
2. Ավտոբուսի ձեռք բերման համար, համայնքի բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայության՝ տրանսպորտային սարքավորումներ հոդվածից հատկացնել 2 400 000 / երկու միլիոն չորս հարյուր հազար/ դրամ:

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ ( 7 ) | ԴԵՄ ( 1 ) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | | | |
| Արտաշես Գևորգյան | | | |
| Արմեն Քաքուլյան | | | |
| Կարեն Սերգոյան | | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | | |
| Ներսես Մաթևոսյան | | | |
| Արա Մուշեղյան | | | |
| Վահան Մխիթարյան | | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

19 հունիսի 2013թ
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 29 -Ն
17 հունիսի 2013 թվական
գ.Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 2 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի և << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով , Ախուրյան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 23-ի <<Ախուրյանի համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի պահուստային միջոցներ << 11 141.0 հազար դրամ >>թիվը փոխարինել <<10 741.0 հազար դրամ>> թվով

Ընդհանուր բնույթի հանրային ծառայության <<13700.0 հազար դրամ>> թիվը փոխարինել <<14 100.0 հազար դրամ>> թվով, այդ թվում տրանսպորտային սարքավորումներ <<2 000.0 հազար դրամ>> թիվը փոխարինել <<2400.0 հազար դրամ>> թվով, ավտոբուս ձեռք բերելու համար

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից <<200.0 հազար դրամ>> հատկացնել գյուղապետարանի տրակտորի վերանորոգման համար :

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ ( 7 ) | ԴԵՄ ( Г ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | | | |
| Արտաշես Գևորգյան | | | |
| Արմեն Բաբուջյան | | | |
| Կարեն Սերգոյան | | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | | |
| Ներսես Մաթևոսյան | | | |
| Արա Մուշեղյան | | | |
| Վահան Մխիթարյան | | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

19 հունիսի 2013թ
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 30

17 հունիսի 2013 թվական
գ.Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 28-րդ հոդվածի 2-րդ ,30-րդ հոդվածի 5-րդ մասերով, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանը

Համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 30
2.Հաստատել Ախուրյանի գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը համաձայն N 1 հավելվածի
3.Հաստատել Ախուրյանի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի 2013 թվականի կառուցվածքը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> N 64 որոշումը:

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ ( Ն ) | ԴԵՄ ( Ը ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | | | |
| Արտաշես Գևորգյան | | | |
| Արմեն Բաբուցյան | | | |
| Կարեն Սերգոյան | | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | | |
| Ներսես Մաթևոսյան | | | |
| Արա Մուշեղյան | | | |
| Վահան Մխիթարյան | | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

19 հունիսի 2013թ
գ. Ախուրյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյանի գյուղական
համայնքի ավագանու 2013 թվականի
հունիսի 17-ի N 30 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ՈՒՆԻ ՄԵԿ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝

ԱԽՈՒՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺԻՆ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյանի գյուղական
համայնքի ավագանու 2013 թվականի
հունիսի 17-ի N 30 որոշման

| N | N | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 1 | 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 73 | 169360 |
| 2 | 2 | Համայնքի ղեկավարի օգնական | | 1 | 35 | 81200 |
| | | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ | | | | |
| 3 | 1 | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 73 | 169360 |
| 4 | 2 | Գլխավոր մասնագետ | 2.3-1 | 1 | 46 | 106720 |
| 5 | 3 | Գլխավոր մասնագետ | 2.3-2 | 1 | 46 | 106720 |
| 6 | 4 | Գլխավոր մասնագետ | 2.3-3 | 1 | 46 | 106720 |
| 7 | 5 | Գլխավոր մասնագետ | 2.3-4 | 1 | 46 | 106720 |
| 8 | 6 | Գլխավոր մասնագետ | 2.3-5 | 1 | 46 | 106720 |
| 9 | 7 | Գլխավոր մասնագետ | 2.3-6 | 1 | 46 | 106720 |
| 10 | 8 | Առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 44 | 102080 |
| 11 | 9 | Առաջատար մասնագետ | 3.1-2 | 1 | 44 | 102080 |
| 12 | 10 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 33 | 76560 |
| 13 | 11 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-2 | 1 | 33 | 76560 |
| 14 | 12 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-3 | 1 | 33 | 76560 |
| 15 | 13 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-5 | 1 | 33 | 76560 |
| 16 | 14 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-6 | 1 | 33 | 76560 |
| 17 | 15 | 2-րդ կարգի մասնագետ | 3.3-1 | 1 | 30 | 69600 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | | | | | | |
| 18 | 1 | Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ախուրյանի տարածքային բաժնի պետ | 1.3-1 | 1 | 52.58 | 122000 |
| 19 | 2 | Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ախուրյանի տարածքային բաժնի 1-ին կարգի մասնագետ | 3.2-4 | 1 | 25.86 | 60000 |
| | | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ | | | | |
| 20 | 1 | համակարգչի օպերատոր | | 2 | 25.86 | 60000 |
| 21 | 2 | տնտեսվար | | 1 | 28.01 | 65000 |
| 22 | 3 | վարորդ | | 1 | 28.01 | 65000 |
| 23 | 4 | գանձապահ | | 1 | 23.7 | 55000 |
| 24 | 5 | հավաքարար | | 2 | 23.7 | 55000 |
| 25 | 6 | բակապահ | | 1 | 21.55 | 50000 |
| 26 | 7 | պահակ | | 3 | 21.55 | 50000 |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 31
17 հունիսի 2013 թվական
գ.Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արխիվային գործի մասին >> Հայաստանի Հնրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 3-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է .

1.Ախուրյան համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերը սեփականության իրավունքով փոխանցել պետական սեփականությանը:
2. Համայնքի 2013 թվականի բյուջեի ընդհանուր բնույթի այլ ծառայություններ տնտեսագիտական դասակարգման /4239/ հոդվածից հատկացնել 70.0 / յոթանասուն / հազար դրամ:

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ (7) | ԴԵՄ (1) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | [signature] | | |
| Արտաշես Գևորգյան | [signature] | | |
| Արմեն Բաբուջյան | [signature] | | |
| Կարեն Սերգոյան | [signature] | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | [signature] | |
| Ներսես Մաթևոսյան | [signature] | | |
| Արա Մուշեղյան | [signature] | | |
| Վահան Մխիթարյան | [signature] | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ա. ԻԳԻԹՅԱՆ

19 հունիսի 2013թ
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 32
17 հունիսի 2013 թվական
գ.Ախուրյան

# ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ <<ԱՆՀԱՅՏ>> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի << Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման իրահանգը հաստատելու մասին>> 186-Ն հրամանը, Ախուրյան համայնքի ավագանին
ո ր ո շ ու մ է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քարտեզագրման ժամանակ <<անհայտ>> քաղաքացու սեփականություն փոխանցված 0.065 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն, ծածկագիր 0153-0001:

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ (7) | ԴԵՄ (1) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | | | |
| Արտաշես Գևորգյան | | | |
| Արմեն Բաբուջյան | | | |
| Կարեն Սերգոյան | | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | | |
| Ներսես.Մաթևոսյան | | | |
| Արա Մուշեղյան | | | |
| Վահան Մխիթարյան | | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

19 հունիսի 2013թ
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 33
17 հունիսի 2013 թվական
գ.Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄՈՒՄԱՏՈՒ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻՑ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման 4-րդ, 8-րդ կետերի պահանջներով հիմք ընդունելով անապահով ընտանիքների դիմումները հողի հարկից զիջելու մասին

Համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղի բնակչուհի Հայաստան Սումբատի Շիրինյանի հողի հարկի 6800 /վեց հազար ութ հարյուր / դրամ տույժը զիջել

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղի բնակչուհի Բալասան Վոլոդիայի Բարսեղյանի հողի հարկի 32000 /երեսուներկու հազար / դրամ տույժը զիջել

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղի բնակիչ Շամիր Անդրանիկի Մկրտչյանի հողի հարկի 20000 /քսան հազար / դրամ տույժը զիջել

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ (7) | ԴԵՄ (1) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | [signature] | | |
| Արտաշես Գևորգյան | [signature] | | |
| Արմեն Բաբուցյան | [signature] | | |
| Կարեն Սերգոյան | [signature] | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | [signature] | |
| Ներսես Մաթևոսյան | [signature] | | |
| Արա Մուշեղյան | [signature] | | |
| Վահան Մխիթարյան | [signature] | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ա. ԻԳԻԹՅԱՆ

19 հունիսի 2013թ
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 34

17 հունիսի 2013 թվական
գ.Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՄԵԿ ԲՆԱԿԱՐԱՆ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Սերգեյ Ալեքսանի Եֆրեմովի դիմումը

Համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն հանդիսացող Ախուրյան շրջկ. 13 շենքի, 1-ին բնակարանը, 59.03 քառակուսի մետր մակերեսով, / նոր հասցեն՝ Ջրաշինարարների փող. 1-ին շենք, բն.1/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքում համապատասխան բաժնեմասի հետ նվիրատվության կարգով տալ Սերգեյ Ալեքսանի Եֆրեմովի 3/երեք / անձից բաղկացած ընտանիքին:

Նկատի ունենալով համայնքի բյուջեում համապատասխան դրամական միջոցների բացակայությունը բնակարանի նվիրատվության հետ կապված ծախսերի կատարումը վերապահել վարձակալին

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ ( 7 ) | ԴԵՄ (1) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | [signature] | | |
| Արտաշես Գևորգյան | [signature] | | |
| Արմեն Բաբուջյան | [signature] | | |
| Կարեն Սերգոյան | [signature] | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | [signature] | |
| Ներսես Մաթևոսյան | [signature] | | |
| Արա Մուշեղյան | [signature] | | |
| Վահան Մխիթարյան | [signature] | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԻԳԻԹՅԱՆ

19 հունիսի 2013թ
գ. Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 35

17 հունիսի 2013 թվական

գ.Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով

Համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, 1-ին մասի, 5-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2013 թվականի բյուջեի ընտանիքի անդամներ և զավակներ ծրագրի 10-րդ բաժնի, 4-րդ խմբի, 1-ին դասի 51 ծրագրի 4729 հոդվածից ներքոհիշյալ անձանց տրամադրել դրամական օգնություն, ընդամենը 650.0 հազար դրամ

Սոֆյա Համբարյան - 20.0 հազար դրամ
Լիզա Թովմասյան - 20.0 հազար դրամ
Հովհաննես Տիգրանյան -25.0 հազար դրամ
Հովհաննես Աթոյան -30.0 հազար դրամ
Արտաշես Շախբազյան -20.0 հազար դրամ
Արամ Վարդանյան - 25.0 հազար դրամ
Դոփխիկ Իգիթյան -30.0 հազար դրամ
Հարություն Վարդանյան - 25.0հազար դրամ
Մարիամ Գրիգորյան -10.0 հազար դրամ
Անի Պետրոսյան -10.0 հազար դրամ
Շուշան Վարդանյան -10.0 հազար դրամ
Վահրամ Պիճոյան - 20.0 հազար դրամ
Լիլիթ Գևորգյան -20.0 հազար դրամ
Ջուլիետա Մերկույան -25.0 հազար դրամ
Լուսիկ Վարդանյան -20.0 հազար դրամ
Կառլեն Հովհաննիսյան -20.0 հազար դրամ
Սոֆյա Եղիազարյան -25.0 հազար դրամ
Հերմինե Հարությունյան -25.0 հազար դրամ
Վալյա հարությունյան -25.0 հազար դրամ
Ռուզաննա Իգիթյան -25.0 հազար դրամ
Արսեն Կոստանյան -25.0 հազար դրամ
Թադևոս Մխոյան -25.0 հազար դրամ
Գրիգոր Ներսիսյան -25.0 հազար դրամ
Անուշ Աֆրիկյան - 20.0 հազար դրամ
Անահիտ Իգիթյան - 25.0 հազար դրամ
Թամարա Գաբոյան -20.0 հազար դրամ
Մարիետա Հակոբյան – 20.0 հազար դրամ
Սոֆյա Մսրյան - 20.0 հազար դրամ
Սիրուշ Ավետիսյան - 20.0 հազար դրամ
Նաիրա Ավետիսյան -20.0 հազար դրամ

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ ( 7 ) | ԴԵՄ ( 1 ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|---|
| Արտավազդ Սանթրոսյան | | | |
| Արտաշես Գևորգյան | | | |
| Արմեն Բաբուջյան | | | |
| Կարեն Սերգոյան | | | |
| Հովհաննես Բաղդասարյան | | | |
| Ներսես Մաթևոսյան | | | |
| Արա Մուշեղյան | | | |
| Վահան Մխիթարյան | | | |

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԻԳԻԹՅԱՆ

19 հունիսի 2013թ